

«Ա» ԶԱՅՆԱՎՈՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բ. Հ. ԲԱՆՐԱՄՅԱՆ

«ԼԻ»-ն գրաբարում ուժեղ ու կալուն ձայնավոր էր, սովորաբար ֆիում էր անփոփոխ, միայն քառաբարդութիւն ժամանակ ա հոգակապը հաճախ չէր զրկում՝ քարեհնչունութիւն ստեղծելու, շատ երկար րոտածներից իուսափելու և համեմատաբար կարճ ձևեր ստեղծելու համար, ինչպես՝ քանարեր-քասրեր, փողահար-փողհար, դեղաթափ-դեղթափ, անձնատուր-անձնտուր, քաղաօգ-քաղօղ, առադրութիւն-առդրութիւն և այլն:

Ը-ով հանգոյց և ա ձայնավորով կամ հոգեակապով սկսվող բառերը բարդ-
վելիս սաեղծվում է իա հնչյունաւապակցութիւն. այս ի և ա ձայնավորները
արտաբերութեան տեղերի մոտեցմամբ դառնում են ե, օրինակ՝ բարիարար-
բարերար, որգիարար-որդերար, հոգեանիւթ-հողենիւթ, իւնամիախօս-իւնա-
մեխօս:

Այս բոլորից բացի ա-ի համար դառնում ենք բաղմամբիվ լծորդ կամ զուգաձևեր, որոնց բացատրությունը դուրս լինելով խնդրո առարկայից, բերում ենք որոշ օրինակներ միայն՝ քաղված «Առձեռն» բառարանից:

ԱՌՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ, արմզդական-որմզդական, աւալոց-աւոլոց, անմոլար-
անմոլոր, ընգածին-ընդոծին, սիւղղաբալ-սիղղորալ, խախ-խոխ, շաղգամ-
շողգամ:

Ա-Ու-իւախ-իւուիւ, աղօշ-ուղէշ, դամապետ-գումապետ, ասպաղախ-ասպուղան, ապաստութիւն ապուստութիւն:

Ա-ը-անկողին-ընկողին, անձխոտ-ընձախոտ, անպահակեմ-ըմպահակեմ,
 •ժանդակ-օժընդակ:

Ա-Ե-արագ-երագ, արաստ-երաստ, աղագ-եղագ, աղիմալ-եղամա, աղ-տիւր-եղտիւր, առասան-երասան(ակ), ապերանք-եպերանք, դրաւ-դրեն, կա-նափ-կանեփ, ասղանի-ասղենի, մերձանամ-մերձենամ, պահացող-պահնոռո:

Ա-Է-բազալ-բազէ, որդան-որդէն, բակեղաթ-բակեղէթ, բաղնապան-բաղ-
նէպան:

Ա-ԵԱ-ՎԻՍՏԱՆ-ՎԻՍՏԱՆ, ԿԱՅԱՆ-ԿԱՅԱՆ, ԳԵՂԱՐԴՆ-ԳԵՂԵԱՐԴՆ, ՋԱՂԱՄԵ-ՋԱՂԵԱՄԵ:

Ա-ի շաղաղ-շաղիղ, կալաառ-կալտիռ, գրգամ-գրգիմ, անդանճմ-անդի-
ճմ, ասացեալ-ասիցեալ:

Ա-ապար-սպար, ապարդում-ապրգում, ականատ-ակնատ, ապասպարեմ-
պսպարեմ-ապսպրեմ և այլն:

«Ա» ձանափորը բարձրանալով՝ երեք կարգի փոփոխութիւն է ենթարկւում՝ պատմական, փոխադրեցական և ընդհանրական:

Պատմական դարգազմամբ ա-ն ձևում է անփոփոխ, դառնում է ա, օ,

$\bar{m}$, $\bar{w}$, $\bar{o}$, $\bar{o}$, $\bar{o}j$, n , n , nu , m , nu^- , p , n° , $'p$ ($=pw$), pk , k : Կանգ առնենք
դրանց վրա առանձին-առանձին:

Ա > ա — 1. Բացառությամբ առանձին բարրառոնների, համարյա մեկ-նորեք ա-ն մնում է անփոփոխ:

2. Ա-ն անփոփոխ է մնում առանձին պայմաններում, օրինակ, Տիգրանակերտի բարրառում ու-ի մոտ և մի քանի մասնավոր զեպքերում, որոնց վրա կանգ չենք առնի:

Ա > ա — 1. Այսպես սովորական է Տիգրանակերտում, ազատ-ազատ, ազգ > ազք, ալ > աղ, աղալ > աղալ, սման > սման, բուն > փուն, բաւ-րակ > փամբաղ:

2. Նախաճշտ վանկում՝ Սվեդիայում, աւոււն > տոն, ամիս > ամէս, աման > ամուն, աղալ > աղիլ և այլն:

3. Աճառյանի օրենքով, բան > պան — Մրգ.¹ Սլմ. Սւրմ. Շտ. Մկ. Վն. Գր. Շմ. Գնձ. Շմշ. զալ > կալ — Գր. Շմշ. զալ — Շտ. Վն. Մկ. Մրգ. Հրր. Դրր. Շմ. Գնձ. զարի > կ'արի — Սլմ. Սւրմ. Շտ. Վն. Գր. Դրր. Շմ. Գնձ. Շմշ.:

4. Բրարարյան ձայնեղ պայթականներին ու պայթաշփականներին համապատասխանող բարրառային շնչեղ ձայնեղներից անմիջապես հետո՝ Ող-մում, բաժին > բ'աժին, բակ > բ'ակ, բահ > բ'ախ, բան > բ'ան, ձագ > ձ'աք, ձախ > ձ'ախ:

5. Գրարարյան չիշլալ հնչյուններն անփոփոխ պահող Արեշի ու Կոզնի բարրառներում՝ բառակազմի նույն դիրքում, օրինակ՝ բահ > բահ, բաւբակ > բամբակ, ձախ > ձախ և այլն:

6. Վ, գ, ժ և լ բաղաձայններից անմիջապես հետո՝ սովորաբար վերը նշված բարրառներում, ժամ > ժամ — Շտ. Մկ. Վն. Ողմ. Գր., ժանգ > ժանգ՝ — Մրգ. Սւրմ. Շտ. Մկ. Վն. Աղլ. Գր., Դրր. Հրր. Շմ., ժանգ՝ — Ողմ. ժանգ — Եղ. Զթ. և այլն:

7. Գրարարյան խուլերին համապատասխանող ձայնեղների մոտ՝ Սոլու-գում, բալց ոչ հետևողականորեն, կարգ > գալք, կարդալ > գալտալ, նար > քար, հանաչել > ջաչնալ, շալիկք > շարիդ, տագր > գալիք, սլարժանք > բալդանք, տարի > գարի:

Ա > ա Սովորաբար ճշտված վանկում՝ Լոր Բալագետի բարրառում, ալալ > աղալ, մարդ > մարթ և այլն:

Ա > ա, ու. 1. Ապառնի գերբայական վերջավորության մեջ՝ Դարարադի բարրառում, ինչ, իւրմրլան ժամեկական, իմեկու, կ'իրիլան զորեկական, գրեկու:

2. Հաղվաղյուտ բառերում՝ Շամախիի Սեյսարի գլուղի խոսվածքում, վար ժամհար < վահր, թարախ:

Ա > ալ — 1. Սովորաբար լ-ից առաջ՝ Աղուլիսում, բնակալ > բնակալլ, ծալիլ > ծալլիլ, հալիլ > հալլիլ, տսեղ > տլսաղ, Երանեակ > բրալնակ:

2. Առանց որոշակի կանոնի՝ Սերաստիայում, մեծարել > մէձալբէլ, զնացած > գ'ացալձ:

Ա > օ, օ — 1. Շեշտված վանկում՝ Մարաշի, Հաճինի, Զելթունի, Ագուլիսի բարրառներում և Սերաստիայի Բրգնիկի ենթաբարրառում, նախաճշտ վանկում՝ Սվեդիայում, ռնդալինից առաջ թե՛ ճշտված և թե՛ անճշտ վանկում՝ Համճենում, ռնդալինից առաջ ճշտված վանկում՝ Ակնում, ռնդալինից

¹ Հապավումների բանալին տես հոդվածի վերջում:

առաջ, եթե նրան հաջորդում են ա, չ, գ, ա պլյուս և կամ ը՝ Ասլանբեկում և Ալիսի հովտի գյուղերում. ահա մի քանի օրինակ այդ բոլորի համար. աման > ամոն — Մրշ. Ձթ. Հձ., օմօն — Հմշ. ամպ > օմբ — Հմշ. Մրշ. Հձ., անթ > օնթ — Հմշ. Ակն. Ձթ. Հձ., աղ > ող — Մրշ. Հձ. Ձթ., ակն > օկնր — Ազլ. օգ. Մրշ., Օգ — Սվ. բակ > բօկ — Ազլ. բօգ — Մրշ. բ'օղ — Ձթ. բ'Օգ — Սվ. բան > բոն — Մրշ. պոն — Հմշ. բ'ոն — Ձթ. Հձ., ժամ > ժօմ — Հմշ. բրգ. ժծմ — Յդնա.

Ա > օյ — Լ-ից առաջ՝ Ագուլիսում. կալ > կօլլ. ծալ > ծօլլ. սալ > սօլլ. տալ > տօլլ.

Ա > ու. ո՛ւ — 1. Հեշտված վանկում՝ Ձևթունի Յաղուբյան թաղի խոսվածքում, մասամբ նաև Հաճինում, նույն դիրքում, բայց և պլյուս ա, չ, գ, ա պլյուս և կամ ը բաղաձայնական խմբից առաջ՝ Ասլանբեկում ու Ալիսի հովտի գյուղերում, կոկորդալին պալթաշփականներից հետո՝ նոր Ձուղայում. օրինակներ՝ բան > բ'ոն — Ձթ. Սբ. գալ > գ'ոլ — Նշ. աղ > ող — Ձթ. ժամ >

իմում — Ձթ. առատ > օոող — Ձթ. բաթ > թոթ, բանձր > թոճր — Ասլ. և այլն:

Ա > ու. ու — շեշտված վանկում՝ Ավեղիայում, նույն դիրքում. բայց ռեզալիսից առաջ՝ Ագուլիսում. ժամ > ժում — Ազլ. բան > բուն — Ազլ. բ'ուն — Սվ., ծափ > ծուփ — Սվ. աղ > ող — Սվ. բամբակ > բ'ամբուգ — Սվ. ճագար > ճողղուր — Սվ.:

Ա > ու — ունգալիսից առաջ՝ Կյուրին-Մանձլգի ենթաբարբառում:

Ա > բ — 1. Փոփոխությունը սովորական է երեք և ավելի վանկանի բառերում՝ ամենուրեք, միայն վերջնավանկը շեշտող բարբառներում այն տեղի է ունենում միջին վանկում, երբ կից մոտ դարձող բաղաձայնների կուտակումը արտասանության համար տանելի չէ. իսկ եթե տանելի է. ապա ջնջվում է իսպառ (Հմշ. Ակն. Արբ. Սբ. և այլ բարբառներում). իսկ վերջընթեր վանկը շեշտող բարբառներում փոփոխությունը տեղի է ունենում նախաշեշտ վանկում. ամաչկոտ > ամբչկօղ — Կր. ճիւղնդանալ > չիվրնդնալ — Կր. արածել > րրածէլ — Ղրդ. Մղբ. Կրճ. Ազլ. Գր. Ղրբ. Հգր. Դնձ. հալսանիք > հրրսանիք — Դնձ. Երև. հրրսանիք՝ — Մղբ. Կրճ. Գր. Արշ. Կո. Ծմշ. հրրսանիք՝ — Ազլ. հրրսանէք՝ — Ղրբ. Հգր. Ղրդ.:

2. Այս փոփոխությունը կատարվում է նաև երկվանկ բառերում՝ շեշտի տեղափոխության պատճառով՝ վերջընթեր վանկը շեշտող բարբառներում, կամ էլ շատ հաճախ գործածվող բառերում՝ վերջահար բարբառներում. ահա մի քանի օրինակ՝ ասել > րսէլ — Սղմ. Սս. Կր. Դրս. Դպգր. Ակն. Արբ. Տգ. Կս. Սբ. Եվդ. Մրդվ. Սլ. Ատի. Պլ. Թոտ. բսիլ — Թբլ. Մկ. Խրբ. Մրշ. րսէլ — Ասլ. րսել — Ալշ. Մշ. րսուշ — Հմշ. առանց > րռանց — Դնձ. րոսնց — Հմշ., րորնց — Մղբ. Խրբ. առատ > րռող — Թբլ. Ակն. րռատ — Սղմ, րոող — Մրշ. րոող — Սվ. ամեն > հրմէն — Մկ. հ'րմէն — Մշ. րմմէն — Ղրդ. Սլմ. րմմրին — Մրդ.:

3. Այ > ա փոփոխությունից հետո՝ ունգալիսից առաջ՝ ժանիկում և բառավերջի բաց վանկում՝ մի հոգից առաջ՝ Համշենում, ինչ. ձայն > ժան > ժրն. լայն > լրն, այն > րն. երկայն > էրգրն, վերայ(ն) > վրրն. միայնակ > մանակ — մրննագ:

— Փենա մը > փէսր մը, տղա մը > դղը մը. սատանա մը > սադօնր մը, վիլկա (ВІЛКА) մը > վիլկը մը. բոչկա (БОЧКА) մը > բօշկը մը:

Ա > Ը — սովորաբար շեշտված վանկում, բայց ոչ հետևողական կերպով՝ մի շարք բարբառներում. ամառն > ամթոնր — Ղրդ. անդամ > անդրմնր — Ղրդ. բակկն > պընդըլ — Ղրդ. օղր. Կրճ. Ղրբ. Շմ. Արշ. Գնձ.:

Ա > 'ր (= ր^ա) — նախաշեշտ և շեշտված վանկերում, բայց ոչ հետևողական կերպով՝ Զելթունում, մասամբ էլ Ակնում. ամեկն > 'րմմէն — Ակն. խանութ > խ'րնութ — Ակն. գնալ > դն'ր — Ակն.:

Ա > րե. փոփոխությունը կատարվում է շրթնային և շփական բաղաձայններից հետո՝ մի քանի բարբառներում. ալսպես՝ ամառն > ամրէոնր — Ղրբ. կածան > կրէծան — Շմ. և այլն.:

Ա > և փոփոխությունը, որը օրինաչափ զարգացումն է ա > ւ հնչյունափոխության, գիտեն դրաբարյան ձայնեղների շարքը անփոփոխ պահող, ինչպես նաև այդ ձայնեղների դիմաց խուլեր ունեցող մի քանի բարբառներ. բակ > բէկ — Մղր. Կրճ. պէկ — Շմ. չգր. Ղրբ., բակ > բէհ — Մղր. Կրճ. պէհ — Շմ. չգր. Ղրբ., բակ > բէն — Ղրդ. Մղր. Կրճ. պէն — չգր. Ղրբ. բակ > բէմբակ — Ղրդ. Մղր. Կրճ. պէմբակ — չգր. Ղրբ.:

Փոխազդեցական փոփոխությունը ա-ն կարող է դառնալ ա, օ, օ, օ, օյ, ո, ու, ւ, ր, ի', և, ի, ալսպես.

Ա > օ — 1. ներդաշնակությունը կից վանկի ա ձայնավորի. ինչպես՝ բարակ > պարակ — Շմ. Գնձ. արդար > արթար — Շմ. Գնձ. շալակ — շալակ — Գնձ., շալագ՝ — Շմ. և այլն.:

2. Անկանոն կերպով (միայն առանձին բարբառներում փոփոխությունը տեղի է ունենում որոշ պայմաններում, ինչպես, օրինակ՝ Սոլոդում՝ ո, ր, յ հնչյուններից առաջ). ազի > հազի — Ղրդ. Արշ. հագի — Կո. հագի — Կրճ. ալի — Վն. ալկի — Եղ. հակի — Շտ. հաքի — Շմ. Ղրբ. հաքի — չգր. հաքո՝ — Գր. Ղրբ. մաշել > մաշէլ — Կս. Մրշ.:

Դիտողություն. Վանի բարբառում բազմաթիվ օրինակներ կան, որոնք շեղվում են ա > օ փոփոխության կանոնից, և սրանց հանդամանքները Հ. Աճառյանը, ինչպես նշում է ինքը, չի կարողացել պարզել. այդ բոլոր օրինակները, թվով 103, նա զետեղել է իր մենագրության մեջ.:

Կրկին ու կրկին քննելով այդ օրինակները, մենք նկատեցինք, որ դրանցից մոտ 60-ում փոփոխությունը տեղի է ունեցել կամ վ, գ, ժ և լ բաղաձայններից հետո՝ վա > վա, ուա > վա, ւա > վա, գա > գա, ժա > ժա, լա > լա կամ էլ բառակազմի ա ձայնավորի ներդաշնակությամբ, պայմաններ, որոնք վճռական են նաև ուրիշ բարբառներում. Օրինակների մյուս մասը, մոտ 40, կամ օտար փոխառություններ են. շաքար > շաք'ար, ռեհան > ռոհան կամ ուշ շրջանի գրական բառեր. Սակավաթիվ օրինակներ կան միայն, որոնց մեջ ա > օ բոլորովին անկանոն է. փափուկ > փափուկ, քարաթոթոշ > ք'աթթաթ(շ): Սրանց մեջ, սակայն, փոփոխությունը կատարվել է համարանության օրենքով (համտ. արդար > արտար > արթար և ք'աթթաթ(շ), մանավանդ այն մասնակ, երբ բարբառում գործող ա > օ փոփոխության օրենքը արդեն սկսել էր քալքալվել կամ քարանալ, երբ ջ-ն այլևս չէր և ոչ մի հիմք չկար տարբերելու ն > օ-ից.:

Ա > օ — 1. Շեշտված վանկում ոնգայինից առաջ, երբ և վերջինս իր երանգը տալով ա-ին, չնչվում է կամ դառնում է թերաձայն՝ Ասլանրեկում ամաս > ամաս.:

2 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 24—26.:

2. Ան պլուս զր, զո, ձր խմբերում ա-ն ստանում է ն-ի նրանդը և ն-ն էլ ջնջվում է՝ Սերաստիայում, Պոլսում:

3. Մի շարք նրկվանկ բառերի սկզբում՝ ռնգայինից առաջ՝ Ոգմում, աման > աման:

Ա > օ, օ -- 1. Երկաշնակությամբ կից վանկի օ, օ ու, ու ձայնավորների, արիւն > Օոռն -- Մրդ. արմուկն > նումունդ՝ -- Սւրմ. հարիւր > հօրուր -- Ազլ. Կրճ. սապուն > սօպուն -- Արշ.:

2. Առերևույթ փոփոխությամբ, իբրև մի նրկորդ արմատական ձևից առաջացած կամ կապակիով ուրիշ բոլոր հետ. բառամեջ > թօթմէլ -- Երև. Մկ. Առտ. թօթմեկ -- Սլմ. թօթմեկ -- Կր. Մշ. թօթմիլ -- Աս. Արբ. Մրդվ. Պլ. թօթմիլ -- Տգ. Ասլ. թրթմօշէլ -- Գնձ. Ղրբ. շաղգամ > շօխքամ -- Տգ. տառաւար > գօղօվար -- Խրբ. պատինճան > պօրնջան -- Երև.:

3. Անորոշ պատճառով. բաղց > քօխց -- Ղրդ. Մրդ. Կրճ. կարկափ > կրկօփ -- Մրդ. պատին > բօղինջ -- Եվդ. պապի > պօպի -- Ազլ. զամփո > դօմփո -- Երև. բարձր > բձուր -- Կրճ. բափօր > թօփուր -- Կալ. Վամիչ > չօմէնչ -- Մրդ. անարգել > անօրքէլ -- Խրբ. մացառ > մօցէռ -- Երև. տարգալ > քրթօլ -- Ղրբ. գոփօլ -- Արշ. աղիւս > օղիւս -- Վն. Մկ. բաղցր > քօխցր -- Ղրդ. քօղցուր -- Արշ. քօխցուր -- Մրդ. Կրճ. քօխծրր -- Արշ. զարի > գօրի -- Արշ. դօրի -- Կրճ. Արշ. Կո. դօրէ -- Էրդ. կօրէ -- Էրբ. չղր.:

Ա > ո -- առերևույթ փոփոխությամբ, իբրև ալլ արմատական ձևից. գաղա(իկ) «ծածուկ» -- գողտիկ > դօխտիկ -- ՆՋ.:

Ա > ու, ու -- 1. Երկաշնակությամբ կից վանկի ու, ու ձայնավորների. արտասուք > արդուսուք -- Լհ., սանդուխ > սունդուխ -- Հճ. սապուն > սապուն > սուպուն -- Մրդ. Կրճ. Կալ. ալևոր > հուլավուր -- Ղրդ. վարդևոր > վարդավուր -- Մրդ. անկողին > ուղունգան -- Ջթ., ունգղէն -- Սվ.:

2. Առերևույթ փոփոխությամբ՝ կազմված արմատական ձևի վրաից, կապակիով ածանցի հետ կամ ստուգարանությամբ. հեռանալ > հէռունալ -- Աս. Պլ. Հայաստան > Խալքսթուն -- Մրդ. փաքաքել > փաթութել -- Վն. (փաթութ > փաթութ ձևից), մատանի > մուտանի -- Ղրդ. մուտանա -- Ղրբ. սատանայ > սուտանա -- Ղրբ. (իբրև սուտ-անա), գալօր > գուլօր -- ՆՋ. (գալ > գոլ անցումից հետո, որովհետև՝ գալող, գալու օր), ածան > աձուն -- Սլ. (ան փոխարինելով ուն ածանցով), սաւան > սավուն -- Սբ.:

3. Արտաքին ազդեցությամբ. բաղարջ -- պուղարջա -- Հմշ. (խաչավորվելով թրք. bcğaz ձևի հետ):

4. Անորոշ պատճառով. ամեն > ումէն -- Մրդ. առանց > առունց > ուռունց -- Կրճ. ամսչ > հումանչ -- Արշ. հասկանալ > հասգունօլ -- Ջթ. ծիրան > ծարուն -- Ազլ. դամաքել > դամբուրէլ -- Արշ. զալ > գուլ -- Մրդ. Կրճ. գուլ -- Ազլ. ականջ > անգուն -- Մրդ. Կրճ. Ազլ. Ղրբ. չղր. անջուկ -- Ղրբ. Գր. տարգալ > դրգալ -- Ազլ. դի՛գուլ -- Մրդ. դուգուլ -- Կրճ. զարի > գուրէ -- Մրդ.:

Ա > ը -- 1. Արտաքին կամ հարևան բարբառի ազդեցությամբ. սատանայ > սըտանա -- Շմ. կաչաղակ > կըչըղակ -- Շմ. Արշ. կըճըղակ -- Կո. կարենալ > գըրնալ -- Նխօ. Պլ.:

2. Առերևույթ փոփոխությամբ. անկողին > ընգօղին -- Մշ. Սս. Խրբ. Արբ. Տգ. Սբ. Մրդվ. հընգօղին -- Արբ. (իբրև ընդ-կողին):

3. Անսովոր կերպով. կաղանդ > դաղընդ — Նիսք. Սլ. 71 :

Ա > ի՝ — ներդաշնակութամբ շեշտված վանկի առաջնային շարքի ձայնավորի. բանալի > բի՛լանի — Մղր. բամանկի > պի՛ժանի — Շմ. շալակ > շի՛լոգ — Շմ. բանձրանալ > թի՛նձի՛րանի — Մղր. և այլն:

Ա > է — 1. ներդաշնակութամբ կից վանկի առաջնային շարքի ձայնավորների. դարիվեր > դէրվէր — Նիսք. դէրիվէր — Սլ. ծագել > ծէքէլ — Ղրբ. Գնձ. Երև. Կր. ծէքիլ — Ողմ. ծէքիլ — Մղր. ծէքուշ — Հմշ. աւելի > էվէլի — Բլգ. Ալշ. Մշ. լէվել — Սր. լէվէլ — Արշ. Կո. էվէլ — Արշ. Գնձ. Գր. Կր. Սս. Տգ. Խրբ. Դրս. Ակն. Արբ. Եդ. Սր. Կս. Մրգվ. Սլ. Ասլ. Պլ. պահել > բէհէլ — Արբ. բէիլ — Խրբ. բէհուշ — Հմշ.:

2. Առերևութ փոփոխութամբ՝ հոդակապի. տանցի փոփոխութամբ. կալամաս > կալէմաս — Վն. (Իրբև կալի-մաս), քարաման > քարէման — Խրբ. (Իրբև՝ քարի-), գետնաշարժ > գէղնէմաժ — Նիսք. վարդավառ > վարդեր > վարթէօր — Նիսք. վաշտէօր — Հմշ. վարտէվար — Վն. վտրթէվառ — Պլ. տարակուսել > տարէկուսիլ — Խրբ.:

3. Կապկերով ուրիշ բառի հետ. նախնա > նէխաժ — Վն. (կցվելով նեխել բառին), շարական > շէրաղան — Պլ. (թրք. şeyr բառի նմանողութամբ), դարիվայր > դէրվար — Նիսք. դէրիվար — Սլ. (գերիվեր > դէրվեր ձևի աղ-ղեցութամբ):

4. Օտար ձևով կամ խաչավորմամբ. շաքար > շէքէ՛ր — Ասլ. ապրշում > էրուշում — Ակն. մարդակ > մէրթէք — Հմշ. ապարանջան > էրբոջան — Ակն. պանիր > բէնիր — Նիսք.:

5. Անորոշ պատճառով, միտքն նկատելի է, որ փոփոխութունը տեղի է ունեցել մեծ մասամբ Վ. ո. ր. ն. չ(սք) բաղաձայններից առաջ. կաշաղակ > կրչղակ — Երև. քրչղակ — Ղրգ. Մղր. Կրճ. Դր. Ղրբ. Հղր. մանգաղ > մանղեղ — Մկ. մանգ՛եղ — Սլմ., առաջ > էռաջ — Մրգվ. հառէչ — ՆՋ. Մշ. առէչ — Մրշ. էռիջ — Մղր. էռէչ — Թոռ. հառայ > ջէռա — Մկ., արիւն > էրուն — Մրգ. Սլմ. Շոռ. Վն. էրուն — Սլմ. էլին — Ջթ. Հճ. լէրօն — Ողմ. լէրին — Կո. լէնը — Արշ., արժան > էրժան > էժան — Նիսք. Մրգ. Շմ. Գնձ. Երև. Բլգ. Խրբ. Կր. Սս. Ալշ. Մշ. Եդ. էժան — Մրգ. Սլմ. Սրմ. Արշ. Կո. Ազլ. Շոռ. Մկ. Վն. էժօն — Հմշ. էժժան — Տդ. հէժան — Ողմ. հառն > ջէռն — Մրգվ. հառն > ջէն, հոլ — Ջթ. կառն > կաննչ — Ղրբ. Մղր. հառն > ճաննչ — Մղր. լաշակ > լէշանք — Խրբ. ակառն > առղէք — Ջթ. դանգառ > կ՛էնգ՛առ — Շմ. տատան > տատէչ — Մղր. հապաստակ > լարէսղ՛աղ՛ — Լն. աշուն — էշունք — Հճ. էշօնք — Ջթ. քաջք > քէշք — Արշ. աջ > էջ՛ք՛իգ — Հճ. գաջ > կ՛էճ — Մկ. կրակ > գի՛րէկ — Մղր., ծագ > ծէք — Գնձ. ծէք՛ — Ղրբ. Մղր. ուրագ > ուրէք — Հմշ. կածան > կէժան — Արշ. Գնձ. Կո. լղիժակ > բուժէգ — Հմշ. պատրոյգ > պէտրուկ — Մղր. պատրոյս > պէտրուս — Շմ. գղալ > կըտել — Վն. կ՛րտէլ — Մկ. գ՛րգ՛էլ — Ողմ. քիթել — Սլմ. սահել > սէհուշ — Հմշ.:

Ա > ի — 1. ներդաշնակութամբ կից վանկի առաջնային շարքի ձայնավորների. անկանել > ինդիլ — Ղրգ. ինիլ — Ակն. ինէլ — Սրմ. ինել — Վն.

3 Մեղրու բարբառում ա > է փոփոխութունը մասնավոր օրերն է նշեց առաջ՝ բառակերթի անշեշա վանկում, սակայն բառի աճման ժամանակ շեշտն բնկնելով այդ վանկի վրա, ա-ն վերականգնվում է (աե՛ս էդ. Աղ ա յ ա ն, Մեղրու բարբառը, էջ 28)։

իջնալ — Ասլ. Պլ. Ռոտ. ինէլ — Մրդ. ինել — Սլմ արեգակն > իրիքնակ — Հգր. Ղրր. Գր. իրիննակ — Ղրդ. Կրճ. բաժանել > բիժենիլ — Կրճ. բիժնիլ — Սվ. պիժենիլ — Հգր. Ղրր. խարշել > խիշիլ — Սվ. մաշել > միշիլ — Ավ. յսաակել > հսդիդէլ — Եվդ. յատել > հիդիլ — Հճ. պահել > բիհէլ — Կս. բիհիլ — Արբ. աւելի > իվիլի¹ — Կրճ. իվիլ — Ղրդ. Սդր. Կրճ. Ասլ. Ղրր. Զթ. Մրշ. իվել — ԵՋ. չամիչ > չիմիչ — Կրճ. կանչել > դինչիլ — Սվ.:

2. Ավելի առաջ տանելով ա > ա > է փոփոխությունը, բանջար > բինջար — Ազլ. բամբակ > բիմբակ — Ազլ. բաժանել > պիժանիլ — Եր. արժան > իժան — Ղրդ. Մդր. Հգր. Ղրր. Ես. շալակ > շիլակ² — Մրդ. հանաչ > ճիհանչ — Արշ. ճանիչ — Կրճ. բահ > բիհ — Ղրդ. պիհ — Ծմ. Հգր. Ղրր.:

3. Առերևույթ փոփոխությամբ³ ակ փոխարինելով իկ, եկ ածանցով. դերակ > դ'երդիկ — ԵՋ. աէրդիկ — Դնձ. քակ > ք'իսիկ — Վն. մատուակ > մատուսիկ — Վն. ծիծեռակ > ձրձեռնիք — Եխճ. ճճրոնէկ — Վն. մուհակ > մուջջիդ — Արբ. ալոջ > իլՕլջ — Սվ.:

4. Անորոշ պատճառով. վեր > վիր — Հմշ. հետ > հիդ — Հմշ. չակչ > չինչ — Տդ. տարդալ > դ'իդ սլ — Լճ. խարագան > խարիգան — Վն. կաշի > գիշա — Սվ. յարդ > իրթ — Սվ. պաշար > բոշար — Ավ. սա, գա, նա > սի, գի, նի — Եվդ.:

Ինչպես տեսցինք, ա ձայնավորը ենթարկվում է նաև քնդհանրական փոփոխության՝ սղվում է բոլոր բարբառներում, միայն վերջահար բարբառներում այդ տեղի է ունենում երեք և ավելի վանկանի բառերի միջին վանկում, իսկ վերջրնիկ վանկը շեշտող բարբառներում՝ նախաշեշտ վանկում առավել ևս բառասկզբի բաց վանկում, ահա մի քանի օրինակ բոլորի համար. արածել > արծիլ — Թրլ. Արթվ. արձէլ — Եկո. Կր. Ակն. Արբ. Արբ. Տդ. Եդ. Կս. Մրշ. Սվ. Սր. Սլ. Ռոտ. արձէլ — Ասլ. արձել — Ալշ. Մշ. Սշ. արձրլ — Զթ. այձել — Հճ. արձէլու — Էճ. այձուշ — Հմշ. կատաղել > կատդիլ — Սլմ. Արմ. Ծտ. Մկ. Սդմ. Վն. Կր. Թրլ. կատիւէլ — Արթվ. գադդիլ — Սս. Դրս. Բլ. Արբ. Սվ. Ասլ. Պրտդ. Պլ. Ռոտ. կսդդէլ — Մրդ. Էլդ. Կր. Եխճ. Եդ. գադդուշ — Հմշ. գադդրլ — Զթ. հարսանիք > հարսնիք — Սշ. Աւշ. Սս. Բրլ. Արթվ. Եկո. Արբ. Արբ. Եդ. Եվդ. Մրդվ. Ասլ. Պլ. Ռոտ. հարսնիք — Կս. Զթ. հաշնիք — Հճ. Սր. հաշնիք — Հմշ. Սլ. հարսնաք — Մրշ. Սվ. հարսնիք — Տդ. խաշնիք — ԵՋ. խարսնիս — Մրդ. Ծտ. Վն. խարսնէ'ս — Սդմ. խառսնիս — Մկ. խառնիս — Մրդ. Սլմ. Արմ. Բւդ.:

5. Բառի կազմում կամ բառակապակցություն մեջ, երբ ինչ-ինչ պատճառներով երկու ա հանդիպում են, նրանցից մեկը սղվում է, այսպես՝ Նոր Զուգայի բարբառում, պահարան > պտարան > պարան, ծառայ > ծառամ, ինչ ա ասում > ինչ ասամ:

Այս բոլորից հետևում է, որ ա ձայնավորը բարբառներում ենթարկվում է երբեմն բավականաչափ խիստ փոփոխությունների՝ ա, ա, ա, ս, ա, ալ, օ, օ, ո, ո, օլ, ու, տ, ո, ի', 'ր, րե, է, յե, ե, ի:

¹ Բարբառային ձևերն ստացվել են յաւել ձևից, ալ > է փոփոխությամբ և ապա՝ է > ի հաջորդ ի-ի ներդաշնակությամբ: Բոտ Հ. Աճառյանի, որոշ բարբառներում Պոլիս. Նոր Զուգա, փոփոխությունը ներդաշնակությամբ չէ, այլ դանդաղանկյու համար աւել գոյականից (սխնություն Նոր Զուգայի բարբառի, էջ 81):

Ա՛ ձայնավորը, ինչպես տեսանք, բաղմամբիվ բարրառներում դառնում է ա. այս երևույթը որոշ բարրառներում կանոն է, իսկ ուրիշներում մասնավոր բնույթ ունի:

Կանոնավոր փոփոխությունն էլ, սակայն, տարրեր բարրառներում տեղի է ունենում տարրեր ձևերով: Եթե Վանի, Մոկսի, Մարաղայի, Ուրմիայի, Սալմաստի, Ղարաբաղի և այլ բարրառներում ա > ա փոփոխությունը բացատրվում է Աճառյանի օրենքով, ապա Կողենի, Արեշի, մասամբ նաև Աղուլիսի ու Ղարաբաղի բարրառներում՝ ալղ օրենքին հակառակ, այսինքն՝ ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները պահվում են անփոփոխ, իսկ զրանց անմիջապես հաջորդող ա-ն դառնում է ա: Բ տարրերություն ալղ բոլորի, Ողմի բարրառը զրաբարյան ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները դարձնում է շնչեղ և հաջորդող ա-ն էլ՝ ա, իսկ Ավեղիայի բարրառը, որը նախպես ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները դարձնում է շնչեղ, ա > ա փոփոխությունը կատարում է անկախ բաղաձայնների փոփոխությունից՝ նախաշեշտ վանկում. Տիգրանակերտի բարրառը ալիլի առաջ է անցել, նա էլ զրաբարյան ձայնեղները փոփոխում է, դարձնում շնչեղ խուլ, բայց չգիտե հիշյալ կանոնները և փոփոխությունները կատարում է բոլոր պայմաններում, ա-ն անփոփոխ պահելով միայն ուշ շրջանից զրական փոխառություններում և այն բառերում, որոնց մեջ կա ու:

Ա > ա փոփոխությունը բավական լայն տարածում ունի զ, ժ, որոշ բարրառներում նաև վ ձայնեղ շփականներից և լ-ից հետո՝ վերը նշված առաջին և երկրորդ խմբերի բարրառներում: Այս դեպքում երևույթը չի բնորոշվում բոլոր օրինակները և մնացել է կիսակատար և ինչպես երևում է, այն սկիզբ է առել ավելի ուշ, հիմնական օրենքի աղղեցությունամբ, ընդհանրապես ձայնեղներից հետո ա-ն ա դարձնելու միտումով:

Ա > ա փոփոխությունը կատարվում է նաև ձայնավորների ներդաշնակության օրենքով, որը նույնպես բարրառներում տարրեր ձևերով է զրսեորվում: Ծանր ու թեթև ձայնավորների ունեցող բարրառներում ա-ն անփոփոխ է պահվում կից վանկի ծանր ձայնավորի աղղեցությամբ, բայց փոխվում է ա-ի՝ թեթև ձայնավորի աղղեցությամբ:

Այսպես, Մարաղայի բարրառում ը, ր, ը, օ, ու, ու, ու, ու ծանր ձայնավորներ են և զրանց կից վանկի ա-ն էլ մնում է ծանր ա, իսկ ի, ու, օ թեթև են, որոնց ներդաշնակությամբ էլ ա-ն դառնում է ա (ե և ի ձայնավորները չեղոր են, ուստի զրանց կից վանկի ա ձայնավորը մնում է ա կամ դառնում է ա):

Ձայնավորների ներդաշնակության օրենքի զրսեորման ձևերից մեկն էլ այն է, որ եթե բառակազմի վանկներից մեկն ունի ա, ապա մյուսը կամ մյուսները նույնպես մնում են ա-ով, իսկ եթե ա-ով է, ապա մյուսը կամ մյուսները դառնում են ա-ով: Այս երևույթը առկա է ոչ միայն ծանր ու թեթև ձայնավորների ունեցող բարրառներում, այլև այն բարրառներում, որոնք ալղ տարրերությունը չունեն, ինչպես՝ Արեշ, Իանձակ, Կողեն և այլն:

Ա > ա փոփոխության բաղմամբիվ դեպքեր կան մի ամբողջ շարք բարրառներում՝ Համշեն, Խարբերդ, Ակն, Արարկիր, Կեսարիա, Մարաշ, Հաճին, Զեյթուն, Սերաստիա, Ասլանբեկ, ինչպես նաև Մարաղա, Մեղրի, Կարճեան, Ղարաբաղ, Աղուլիս, Սասուն, Վան և այլն: Ալղ դեպքերը ոչ մի կանոնի տակ չեն անցնում, բայց նկատելի է, որ նրանց մի մասը, հատկապես ա > ա օրինաչափ փոփոխությունն ունեցող բարրառներում, բացատրվում է համարանություն օրենքով:

Ինչպես տեսնում ենք, ա ձայնավորի հնչյունափոխության բավականաչափ տարածված երևույթներից մեկն է սա և բացատրվում է ոչ միայն Աճառյանի օրենքով, այլև ուրիշ օրենքներով:

Աճառյանի օրենքը վերաբերում է հատկապես Վանի բարբառին, բայց նրա լրիվ ու ամբողջական արտահայտությունը, մանավանդ այդ օրենքի զարգացման տարբեր աստիճանները, գտնում ենք ուրիշ բարբառներում:

Իրավացի էր մեծանուն հայադեմոր գրելով, որ «Աճառյանի օրենքը այնպիսի հեռանկարներ է բաց անում մեր առաջ և այնպիսի գաղտնիքների բանալի է հանդիսանում, որ ևս համարում եմ իմ բոլոր բարբառագիտական աշխատանքների պսակը»:

Հեշտ չի եղել այդ օրենքի հայտնագործումը. շատերն են փորձել բացատրել ա > օ փոփոխությունը:

Ինոնս Մարաղայի բարբառի քննության մեջ (էջ 25—27) հեղինակը գրում էր, որ այս բարբառում ա-ն շատ հաճախ դառնում է օ, որը շնայած շատ սովորական է նաև Դարաբաղի ու Ագուլիսի բարբառներում, բայց «կարելի չէր լինի գտնել որևէ հաստատուն կանոն» որոշելու համար թե ձայնարանական ինչ պայմաններում և դառնում է օ և ինչ պայմաններում թնում է օնփոփոխություններով այդ պայմանները Մարաղայի և ուրիշ բարբառներում, հեղինակը նկատում է. ա) Վանի բարբառում վ բաղաձայնից հետո ա-ն դառնում է օ, իսկ Մարաղայում այդ պայմանը որոշիչ չէ, որովհետև օրինակների մի մասում այդ պայմանը գործում է, իսկ մյուս մասում չի գործում (հմմտ. վարդ > վարթ, վախ > վախ, վաստակ > վաստակ՝ և վառել > վառէլ, վառեակ > վառէկ՝, վանք > վանք):

բ) Դարաբաղի բարբառում ո, լ և բաղաձայնների մոտ գտնված ա-ն թնում է օ, իսկ Մարաղայում այս պայմանը նույնպես որոշիչ չէ (հմմտ. ապուր > ապուռ, առու > առու, առաւօտուն > առատուն և դառն > տառն, դառնալ > տառնալ, բարեկենդան > պառկ՝աննանք):

Վերջապես «միակ կանոնը, որ իբր ստույգ կարելի է տալ այս մասին, այն է, որ վերջավանկի ա ձայնավորը ոնգականից առաջ գտնված ժամանակ չի դառնա օ և կմնա միշտ ա. նույնիսկ եթե ուրիշ պատճառներ պահանջեն օ Այսպես են օր. աման > աման, չուան > չուան, ծիրան > ծիրան, կանաչ > կանանչ և այլն. հիսունի չափ բառեր, որոնց դեմ սակայն իբր բացառություն ունինք բան > պոն. դարման > տոմոմոն, առաջ > տոռնչ...»:

Այս պայմանները մնացին իբրև պայմաններ, բայց երևելի իր բացատրությունը չստացավ: Տողերիս գրողն էլ դեռևս 1948 թ. իր դիսերտացիոն աշխատության մեջ փորձում էր օ > օ փոփոխությունը բացատրել հին պարսկերենի, հատկապես նրա կարճ ու երկար ձայնավորների և նույնիսկ աղվաներենի միջոցով:

Օրենքը, ինչպես սպասելի էր, գտավ բազմաձևուտ հայագետը. պարզվեցին ոչ միայն օ > օ փոփոխության գաղտնիքները, այլև վերջնական բացատրություն ստացան ո > օ, ու > օ փոփոխությունները, գտնվեցին նոր օրինաչափություններ. պարզվեցին դրանց զարգացման փուլերը և այլն:


Տարբեր բարբառների մենագրական (ինչպես՝ Կոզենի, Շամախու, Ուրմիայի, Շատախի և այլն) և համեմատական քննության շնորհիվ պարզվե-

⁵ Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 20:

ցին ոչ միայն ա > ա փոփոխություն շրջանակներն ա տեղադրված տարածվածությունը, այլև հաստատուն լուծում ստացան ա > և, ա > ի փոփոխությունները:

Այսպես, մի շարք բարբառներում, օրինակ՝ գրարարյան ձայնեղները անփոփոխ պահող Լեղրիի և դրանք խուլ դարձնող Վարարադի բարբառներում ա-ն դառնում է և: Այս անցումը տեղի է ունենում գրարարյան ձայնեղներին համապատասխանող ձայնեղներից (Լեղրի) կամ խուլներից (Վարարադ) անմիջապես հետո, որը, ուրիշ բան չէ, և՛ թե ոչ ա > ա փոփոխության հետագա դարգացումը:

Այսպիսով, ոչ միայն գտնվեց գրարարյան փճակից Վանի բարբառին անցնելու միջնոցակիր (Կողեն), այլև Վանի բարբառի փճակին հաջորդող աստիճանը (Վարարադ, Լեղրի): Ակզրնական ձայնեղ պլլուս ա հնչյունակապակցությունը նախ դարձել է ձայնեղ պլլուս ա (Կողեն), որը առաջ տանելով որոշ բարբառներ ստացել են ձայնեղ պլլուս և (Լեղրի), իսկ ուրիշները (Վան) խուլ պլլուս ա և ավելի առաջ տանելով (Վարարադ, Հադրուժ)՝ խուլ պլլուս և: Այս բոլորը, իբրև դարգացման փուլերի հաջորդականություն կարելի է պատկերել այսպես.



Երևանում, Լեղրիի բարբառը, հակառակ նրանում գործող օրենքի չին հաջորդող ա-ն չի դարձրել և: Այդ տեղի է ունեցել այն բաներում, որոնց կադմի մեջ կա լ-ն հնչյունակապակցություն՝ ստացված և-ի խմբից. սրանից արվում է այն հետևությունը, որ և-ի գրափոխությունը «կատարվել է ավելի ուշ, այն ժամանակ, երբ ա > և. հնչյունական օրենքը այլևս դադարել էր գործելուց»:

Ա ձայնավորի տարածված փոփոխություններից մեկն էլ ը (ի՛) դառնալն է. որով բարբառները երկու փնձ խմբի են բաժանվում. վերջնականը չեղադր, հատկապես կը ճլուղի բարբառները բաղմամանկ բառերի միջին վանկի ա-ն սովորաբար սղում են կամ ջնջում իսպառ, և՛ թե կից դարձող բաղաձայնների կուտակումը արտասանական զգվարություն չի ներկայացնում կամ էլ դարձնում են ը, և՛ թե նրանք առաջ են բերում խճողում: Իսկ բարբառների մյուս խումբը, որը չեղադր է վերջընթեր վանկը, ա-ն ջնջում կամ սովորաբար ը է դարձնում նախաշեղտ վանկում: Միայն ծանր ու թեթե ձայնավորներ ունեցող բարբառները այս ա > ը-ն բառակազմի թեթե ձայնավորի ներդաշնակությունը դարձնում են ի:

Այս ա > ը համընդհանուր օրենքից դուրս են մնում սովորաբար ուշ շրջանի պրական ու օտար փոխառությունները:

⁶ Է. Բ. Բաղրամյան, Լեղրիի բարբառը, էջ 25—26:

Ջարմանալի բացառությունն են կազմում նոր Ջուղայի բարբառի որոշ թաղերի և հնդկահայ խոսվածքները, որոնք բայերի պատճառական ածանցի ա ձայնավորը պահում են անփոփոխ, ինչպես՝ պակաուացնել, տեսանել, պռծանել, հեռացանել և այլն:

Եռավանկ բառերի միջին վանկի ա ձայնավորի սղման օրենքը բարբառից-բարբառ տարբեր է, այսպես, օրինակ՝ Սուչավայի բարբառում այդ օրենքը չնայած Երևանի բարբառի համեմատությամբ ավելի զարգացած է, ետ է մնում Պոլսի բարբառից: Ավելին, որոշ բարբառներում՝ Վան, նոր Ջուղա, նոր Եախիջեան, Պոլիս, Ագուլիս, բառամիջի երկու կից բաղաձայնները արտասանության համար ծանրություն չեն և նրանց միջև ը չի դրվում, իսկ ուրիշներում դա ծանրություն է և նրանց միջև գտնված ա-ն վերածվում է ը-ի:

Նկատենք, որ քառավանկ բառերի մեջ սովորաբար սղվում է միջին վանկերից միայն մեկի ա-ն, որով բառը վեր է ածվում եռավանկի: Չնայած քառավանկից ստացված եռավանկ բառերում սղման օրենքը այլևս չի դործում, բայց որոշ բարբառներում կամ տարբեր պայմաններում այդ օրենքը ավելի առաջ է գնում և քառավանկ բառը դառնում է երկվանկ, այսպես՝ նոր Եախիջեանի բարբառում ունենք մի կողմից առավելում, առադուն «առավոտյան, առավոտուն», բարդէնդանք «բարեկենդան» և մյուս կողմից՝ առդուն, արբուջան «ապարանջան»: Ինչպես երևում է, տարբեր ձայնավորներ ունեցող քառավանկ բառերը սովորաբար դառնում են եռավանկ, իսկ հաջորդական ա ունեցող քառավանկ բառերում՝ միջին վանկերի ա-ն ջնջվում է:

Սղման օրենքը ավելի առաջ տանելով, նախավերջահար բարբառներից շատերը նախաշեշտ բաց վանկի ա-ն իսպառ ջնջում են և գրաբարի համեմատությամբ ստեղծում շատ անսովոր ձևեր (հմտ. 1, Բ-ից առաջ գտնված բառասկզբի ա-ի ջնջումը Ղարաբաղի, Իանձակի, Մեղրիի ու հարևան բարբառներում), սրանց համեմատությամբ շափավոր են Շամախիի, Երևանի պարսկահայ բարբառները, որոնց մեջ ձայնավորների սղման օրենքը թույլ արտահայտություն ունի:

Ա ձայնավորի փոփոխության ցայտուն դրսևորումներից մեկն էլ ա > օ անցումն է: Որոշ բարբառներում փոփոխությունը կատարվում է շեշտված վանկում, ուրիշներում՝ միայն ռեզայինից առաջ, երրորդներում՝ նախաշեշտ ու շեշտված վանկերում կամ միայն նախաշեշտ վանկում:

Ա > օ, օ փոփոխությունը տեղի է ունենում նաև կից վանկի օ, օ. ու. ու ձայնավորների ներդաշնակությամբ: Նկատենք, որ ա-ն շեշտված վանկում օ, օ դառնալուց հետո ավելի շրթնայնանալով դառնում է երկբարբառ ո — Զելթունում, Հաճինում, ո — Ասլանբեկում, Սերաստիայում կամ էլ նախորդող կոկորդային պայթաշփականից ազդվելով՝ ո — նոր Ջուղայում:

Այս ա > օ հնչյունափոխության մասին հայ բարբառագիտության մեջ երկու կարծիք կա. ահադ. Ա. Ղարիբյանը ավելի ճիշտ է համարում կարծել, թե ինչպես ա > օ, այնպես էլ ա > ու փոփոխությունն ունեցող բարբառները, որոնք նախապես տոհմական լեզուներ լինելով և ասիմիլացվելով հայերենի կողմից, տեղի տալով նրան, «ունեցել են շրթնայնացած «ա» ձայնավոր արտասանելու հատկություն, յուրացնելով հայերենի ուժեղացրել են շրթնային տարրը, ու այն բոլոր տեղերում, որտեղ «ա»-ն արտասանվում է շրթնայնացած, ուղղակի արտասանում են պարզ «օ» կամ «ու» ձայնավոր»:

¹ Ա. Ղ. արիբյան, հայ բարբառագիտություն, 1933, էջ 109:

Բոլորովին հակառակն է պնդում ակադ. Հ. Աճառյանը. քննելով Համ-
շենի բարբառի միջին վանկում ա ունեցող բառերը և ան (անել, անիլ)
ածանց ունեցող բայերը, հեղինակը գտնում է, որ ա > օ փոփոխության
օրենքը ավելի ուշ շրջանի երևույթ է, քան ա ձայնավորի սղման օրենքը.
«Ա > օ ձայնափոխության հետևության ապացույցն էլ այն է, որ նորագույն
թուրքերեն բառերն էլ ենթարկված են նույն ձայնափոխության», ինչ. ջզդոն
«փողի քսակ» (թրք. j'zdan), քավոն «առաստագ» (թրք. tavan), չօրօն
«հովիվ» (թրք. çoban) և այլն:

Սակայն ա > օ փոփոխության օրենքը կարող է ավելի հին լինել, քան
թուրքական փոխառությունները և բացառված չէ, որ օրենքը գործուն լինե-
լով ու հարատևելով տարածվել նաև թուրքական բառերի վրա, բայց որով-
հետև գրական-եկեղեցական բառերը, որոնց զգալի մասը ավելի հին է, քան
թուրքերեն փոխառությունները, ա > ր կամ ան > օն փոխառություններին
չեն ենթարկվում, ուստի հեղինակը հաստատում է, որ ա > օ փոփոխու-
թյան օրենքը շատ ավելի ուշ է առաջացել. քան մուտք են գործել գրական-
եկեղեցական բառերը (հմտ. պատարագ > բաղարագ, վարդապետ > վաշտա-
բեդ, վարժապետ > վարժաբեդ, վարագույր > վարաքուր, ճգնաւոր > ջքնա-
վօր, պսակել > բրսագուշ, գանձանակ > կանցանադ, կնքամայր > գրնքամէր,
աղաչել < աղաչուշ, թանաք > թանաք, նամակ > նամագ):

Այս հետևությունը հակառակ են աւետարան, վանք, ապրանք, անոյշ
և այլ գրական-եկեղեցական բառերը. որոնք վաղուց մերված լինելով բար-
բառի բառապաշարին, Տրապիզոնի գլուղերում արտասանվում են ավեղարօն,
վօնք, աբոօնք, օնուշ, ալսինքն՝ ըստ օրենքի, միայն գաղթականությունից
հետո կամ նոր գաղութում սրանք մնում են անփոփոխ՝ ավեղարան, վանք և
վանկ, աբոանք, անուշ:

Այս բոլորից հետևում է, որ սովորական գործածության բառերում
ոնգալինից առաջ գտնված ա-ն թե՛ հին և թե՛ նոր բարբառում գտնում
է օ. Համշենի հին բարբառում առ օրենքին են անցնում նաև գրական-եկե-
ղեցական ու թուրքական փոխառությունները: Ի տարբերություն հնի, Համ-
շենի նոր բարբառը գրական-եկեղեցական բառերում ա-ն պահում է ան-
փոփոխ:

Ուրեմն նոր առաջացող երևույթը ոչ թե ա > օ փոփոխությունն է որն-
գալինից առաջ, այլ գրական բառերում ա-ն անփոփոխ պահելը, որը, սա-
կայն, ընդհանուր երևույթ է Խրիշ բարբառներում էլ:

Մյուս հետևությունն այն է, որ ա > օ փոփոխության օրենքը, ինչպես
հաստատում են Տրապիզոնի գլուղերի խոսվածքները, կենսունակ է եղել ու
հարատևելով տարածվել ինչպես թուրքական, այնպես էլ գրական-եկեղեցա-
կան բառերի զգալի մասի վրա:

Ա > օ փոփոխության օրենքը Համշենի համեմատությամբ Ագուլիսում
ավելի վաղ է դադարել գործելուց, ուստի և չի տարածվել ուշ շրջանի գրա-
կան ու օտար բառերի վրա, այսպես՝ յաւս բառը վկայված լինելով հին մա-
տենագրության մեջ, իբրև արաբական փոխառություն Ագուլիսում ստացել է
բօս ձևը. դալի (խմորի գունդը թոնրին կպցնելու կոթավոր բարձ) բառը
դարձել է դօլի՝ իբրև հին շրջանից եկող բարբառալին բառ (հմտ. դալի >

¹ Հ. Աճառյան. Քննություն Համշենի բարբառի. էջ 231

տալի՝ Գանձակ, տէլի՝ Ղարաբաղ), իսկ իսլա ճնիշ, ծին՝ քառք, որ հին մատենագրություն մեջ չի գործածված, պահվել է անփոփոխ, այլապես ինքնառաջ միավանկ բառերում ա > օյ փոփոխություն օրենքով պիտի դառնար իսլայ:

Այստեղ էլ. ուրեմն, դործ ունենք հնչյունական օրենքի կենսունակության հետ:

Մի քանի բարբառներում ա-ն կարող է դառնալ ու, ա. այդ փոփոխությունը կատարվում է շեշտված վանկում՝ Սվեդիալում կամ ռնդալինով փակվող շեշտված վանկում՝ Աղուլիսում կամ էլ կից վանկի ու, ու ձայնավորների ներդաշնակությունում: Բոլորովին նեղ տեղական կամ մասնավոր են ա > ա՛, ա, ա, այ, օյ, ու՛, ՝ր, ը, և փոփոխությունները:

Ա ձայնավորի փոփոխություններն ըստ պայմանների ու տեղիտրիալ տարածվածության կարելի է ամփոփել այսպես.

Ա > ա՛ սովորաբար ամենուրեք (միայն մի քանի տեղ ա-ն զանազան փոփոխություններից ազատ է մնում առանձին պայմաններում, օրինակ՝ Մարաշում, Ջելթունում, Սվեդիալում, նախաշեշտ վանկում՝ կից ծանր ձայնավորների ներդաշնակությամբ, Աղուլիսում՝ շեշտահաջորդ վանկում, Տիգրանակերտում ու Սվեդիալում՝ բնականապես ա-ի մոտ):

Ա > ա -- 1. Սովորաբար՝ Տիգրանակերտում:

2. Իրարարյան ձայնեղ պայթականներին ու պայթաշփականներին համապատասխանող բարբառային ա) ձայնեղներից անմիջապես հետո՝ Կոզենում, մասամբ էլ Արեշում, Ղարադաղում, Ողմում, Մարաշում, բ) շեշեղ ձայնեղներից հետո՝ Ողմում, Ջելթունում, գ) խուլերից հետո կամ, որ նույնն է. Աճառյանի օրենքով՝ Վան, Մոկս, Շատախ, Ուրմիա, Սալմաստ, Մարաղա, Հաղրութ, Ղարաբաղ, Շամախի, Գանձակ, Շամշաղին, Գորիս, Կյուրին-Մանճրլզ, դ) վ, զ, ժ, ի-ից հետո՝ Ողմ, Ուրմիա, Սալմաստ, զ, ժ, ի-ից հետո՝ Ղարաբաղ, Արեշ, Գանձակ, Կոզեն, Շամախի, վ, զ, ժ-ից հետո՝ Վան, Մոկս, Շատախ, հ-ից հետո՝ Շատախ, Ողմ, Ղարաբաղ, իս-ից հետո՝ Ողմ, Սալմաստ, Կեսարիա, ա-ից առաջ՝ Մոկս, Կեսարիա, Սերաստիա, Սոլոդ, Ասլանբեկ, լ-ից առաջ՝ Սոլոդ (նաև ր > լ-ի մոտ), Մեղրի (երկվանկ բառերում շեշտի սակ), Կարճևան, Կեսարիա:

3. Ներդաշնակությամբ բառակազմի ա) ա, օ, ու ձայնավորների՝ Վան, Մոկս, Ուրմիա, Սալմաստ, Մեղրի, Շամախի, Արեշ, Գանձակ, Կոզեն, Սվեդիա, Կյուրին-Մանճրլզ, բ) քնդհանրապես առաջնային շարքի ձայնավորների՝ Ջելթուն, Մարաշ, Հաճին, Անտիոք:

4. Շեշտված կամ շեշտահաջորդ վանկում, բայց առանց որոշակի կանոնի՝ Մեղրի, Կարճևան, Աղուլիս, Արեշ, Չմշկածագ, Խարրերդ, Մարաշ, Ասլանբեկ:

5. Առանձին բառերում՝ մասնավոր փոփոխությամբ՝ Երզնկա, Ակն, Հաճին, Սերաստիա, Թոտոսթո:

Ա > ա -- սովորաբար շեշտված վանկում՝ Բալագետ:

Ա > ա՛ ռնդալին բաղաձայնից առաջ՝ շեշտված վանկում՝ Կեսարիա (անտր խմբում), Սերաստիա (անտր, անգլ խմբերում), Եվդոկիա, Ասլանբեկ կամ էլ առանց կանոնի՝ մի շարք բառերի նախաշեշտ վանկում՝ Ասլանբեկ, Ողմ:

Ա > ր — մասնավոր դեպքերում՝ Հաճին, Ասլանբեկ:

Ա > րա — նույնպես մասնավոր կերպով, բայց ոնգալինից առաջ, բայց որում ոնգալինի ջնջվում է՝ Ասլանբեկ:

Ա > ալ — նույնպես մասնավոր կերպով՝ Ագուլիս, Սթանոդ, Ալիսի ավազանի գլուղեր:

Ա > ան, ան — մի քանի բառերում ու ձևերում՝ Մեյսարի, Ղարաբաղ:

Ա > օ — 1. Սովորաբար շեշտված վանկում՝ Մարաշ, Զեյթուն, Հաճին, Թոմարգա, Անտիոք: 2. Նույն դիրքում, բայց միայն ոնգալինից առաջ՝ Համշեն, Ակն: 3. Նույն դիրքում, միայն երբ ոնգալինին հաջորդում է ուրիշ բաղաձայն, նձր, նչն, նգչ, նտր՝ Ասլանբեկ: 4. Թե շեշտված և թե նախաշեշտ վանկերում՝ Ագուլիս, Սվեդիա: 5. Բառամիջում, իրրե ալ > ա օ՝ Ագուլիս: 6. Ու պլլուս ա ձայնավորների կապակցությունը՝ Թրիլիսի, Արդվին, Սվեդիա (ուրիշ բարբառներ գիտեն միայն առաջին ձևում՝ Ղարաբաղ, Գանձակ և այլն): 7. Առանձին բառերում, իրրե մասնավոր դեպքերում՝ Մոկս, Սգմ, Սերմիա, Սալմաստ, Կարճեան, Արեշ, Կոդեն, Երեան, Թրիլիսի, Խարրերդ, Արարկիր, Տիգրանակերտ, Զեյթուն, Եվդոկիա, Մարգվան, Սոլոդ, Ասլանբեկ, Խոտոսթո: 8. Ներդաշնակությունամբ կից վանկի օ ձայնավորի՝ Զեյթուն:

Ա > օ — 1. Ներդաշնակությունամբ կից վանկի օ-ի՝ Զեյթուն: 2. Ան պլլուս բաղաձայն հնչյունակապակցության մեծ՝ նախաշեշտ վանկում՝ Ասլանբեկ: 3. Գրառարյան ձայնեղներին համապատասխանող ձայնեղներից հետո երբևի՜ն՝ Ագուլիս: 4. Առանձին բառերում, իրրե մասնավոր դեպքերում՝ Սալմաստ, Ղարաբաղ, Կարճեան, Ագուլիս, Ղարաբաղ, Արեշ, Սերաստիա, Ասլանբեկ:

Ա > օյ — շեշտված վանկում լ-ից առաջ՝ Ագուլիս:

Ա > ո — 1. Շեշտված վանկում՝ Զեյթունի Շորվալան թաղում և մասամբ էլ Հաճինում: 2. Կոկորդալին պալթաշիականից հետո՝ Նոր Զուղայում:

Ա > ո^ա — շեշտված վանկում (հմմտ. ա > օ, պարագրաֆ 3) Ասլանբեկ, Սերաստիա:

Ա > ու — 1. Շեշտված վանկում՝ Սվեդիա: 2. Նույն դիրքում՝ ոնգալինից առաջ՝ Ագուլիս (անձր, անգչ, անձն, անտր խմբերում): 3. Ներդաշնակությունամբ կից վանկի ու ձայնավորի՝ Ագուլիս, Զեյթուն: 4. Իրրե մասնավոր դեպք՝ Սերմիա, Սալմաստ, Ղարաբաղ, Կարճեան, Ղարաբաղ, Արեշ, Հաճին, Սերաստիա:

Ա > ս — 1. Շեշտված վանկում՝ ս-ից առաջ՝ Սվեդիա: 2. Ներդաշնակությունամբ կից վանկի ու ձայնավորի՝ Զեյթուն, Սվեդիա: 3. Իրրե մասնավոր դեպք՝ Ղարաբաղ, Կարճեան, Ագուլիս, Արեշ:

Ա > ու^ա — ոնգալին բաղաձայնից առաջ, բայց ոչ հետևողականորեն՝ Բրգնիկ, Ալիսի ավազանի գլուղեր:

Ա > ու^ա — որպես մասնավոր դեպք՝ Սալմաստ:

Ա > ր — նախաշեշտ վանկում ա) վերջնական վանկի շեշտող բարբառներում՝ Ղարաբաղ, Մեղրի, Կարճեան, Ագուլիս, Ղարաբաղ, Հաղբուլթ, Գանձակ, Կոդեն: բ) բաղաձայնի բառերի միջին վանկում՝ Մարտղա, Սալմաստ, Սերմիա, Շատախ, Սգմ, Վան, Բաղեշ, Կարին, Թրիլիսի, Նախիջեան, Արթվին, Համշեն, Երզնկա, Ակն, Խարրերդ, Արարկիր, Տիգրանակերտ, Մուշ, Կեսարիա, Մարաշ, Զեյթուն, Հաճին, Սվեդիա, Սերաստիա, Եվդոկիա, Մարգվան,

կյուրին-Մանճղ. Սիրվիհիսար. Սոլոդ. Ասլանրեկ, Ատափաղար. Պարտիդակ, Պոլիս, Ռոտոսթո, Աոտիալ, դ) թույլ դրսևորմամբ՝ Աստրախան, Շամախի, Արեշ, Լերան, գ) միայն առ. ուցան բալաժանցներում՝ Նոր Զուղա. ե) որոշ երկվանկ բառերում՝ համարյա ամենուրեք, դ) բառավերջի փակ և բաց շեշտված վանկերում, լայց միայն մը հոդից առաջ. նույնիսկ այ > ա դարգացումից հետո էլ՝ Համշեն:

Ա > ի — շեշտված վանկի տառջնային շարքի ձայնավորների ներդաշնակություն՝ Մարաղա, Մեղրի, Արարաղ, Շամախի:

Ա > ռ — իրրե մասնավոր դեպք՝ Արաղաղ, Կարճևան, Շամախի, Արեշ: Ա-ն իսպառ ջնջվում է. 1. ետևաշեշտ բաց վանկում՝ բառակցում՝ Արաղաղ, Մեղրի, Կարճևան, Արարաղ, Գանձակ: 2. Բաղմավանկ բառերի միջին վանկում, երբ բաղաձայնների խճողում չի ստեղծվում՝ ա > ռ փոփոխություն ու իմբի բարբառներում:

Ա > է — գրարարյան ձայնեղներին համապատասխանող բարբառային ա) ձայնեղներից անմիջապես հետո՝ Արաղսղ, Մեղրի, Կարճևան, բ) խուլներից հետո՝ Արարաղ, Հաղրութ, գ) ղ, ժ, լ-ից հետո՝ Արաղաղ, Մեղրի, Կարճևան, Արարաղ, Հաղրութ, դ) բառակազմի ա-ից առաջ՝ Ակն, Եվդոկիա. ե) ներդաշնակություն կից վանկի է, ի ձայնավորների՝ Սալմաստ, Ակն, Զեյթուն, Հաճին, Մարդվան, իսկ Մարաղայում, Վանում, Երևանում, Գանձակում, Արաղաղում իրրե այ > ա անցումից հետո՝ բառին և հոդ կամ ք մասնիկ ավելանալու դեպքում, զ) շեշտված վանկի ու, օ ձայնավորների ներդաշնակությամբ՝ անս, անու, անօ, անա խմբերում՝ Ասլանրեկ, է) իրրե մասնավոր դեպք՝ համարյա մյուս բոլոր բարբառներում:

Ա > յե — որպես մասնավոր դեպք՝ Ուրմիա, Ողմ:

Ա > ե' — նույնպես՝ Ողմ:

Ա > ե — նույնպես՝ Սալմաստ, Զեյթուն:

Ա > ի — 1. ներդաշնակությամբ կից վանկի ի ձայնավորի՝ Սալմաստ, Արաղաղ, Արարաղ, Զեյթուն, Սվեդիա: 2. Անկանոն կերպով՝ Արեշ, Ագուլիս:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ազլ — Ազուլիս

Ալշ — Ալաշկերտ

Ամ — Ամասիա

Աոտ — Աոտիալ

Ասլ — Ասլանրեկ

Ատի — Ատափաղար

Ատիս — Աստրախան

Արբ — Արաբկիբ

Արդ — Արթ — Արզվին

Արմ — Արամո

Արշ — Արեշ

Բ — Բարբուդ

Բլ — Բալու

Բյգ — Բայագետ

Դճձ — Գանձակ

Գր — Գորիս

Դ — Դիագին

Եռե — Երևան

Եռ — Եղեսիա

Եվդ — Եվդոկիա

Երզ — Երզնկա

Գթ — Զեյթուն

Թրլ — Թրիխի

Հն — Հնահայ

Խրբ — Խարբերդ

Խտրթ — Խոտրթուր

Կրե — Կարճևան

Կռ — Կոդեն

Կու — Կեսաբիա

Կյուր-Տրնու — Կյուրին - Տարենտե

Կր — Կարին

Հն — Հաճին

Հղր — Հաղրութ

Ձգ — Հազգ

Հնգրիյ — Հոնգարա հայ

Ղրդ — Ղարաղաղ

Ղրբ — Ղարաբաղ

Ռն — Ռանիկ

Մոթ — Մեղրի

Մլթ — Մալաթիա

Սլլ — Մալայ

Մկ — Մակա

Մշ — Մուշ

Մրզվ — Մարզվան

Մրդ — Մարաղա

Մրշ — Մարաշ

Մրբ — Միրաբներ

Նդ — Նորադուդ

Նխթ — Նոր-Նախիջևան

ՆՁ — Նոր Զուղա

Շոռ — Շատախ	Որ — Ուրախախ	Տգ. — Տիգրանակերտ
Շպար. — Շապին. Գարա- հաւար	Ոլ. — Ուրդ	Տրպ. — Տրապիզոն
Շմ. — Շաւախ	Ում. — Ուլմաստ	Ուրմ. — Ուրմա
Չլր. — Չալըր. Թոփախ	Ոչ. — Ունչալա	Պ. — Պարախ
Պլ. — Պոլիս	Ոս. — Ուսուս	Պսպ. — Պեսպա
Պրոպ. — Պարախալ	Ով. — Ուվաղիա	Պրք. — Պրքենդ
Ռոռ. — Ռոռոսթո	Սիրվ. — Սիրվիտար	Օ. — Օրոս
	Վ. — Վալ	

ИЗМЕНЕНИЕ ГЛАСНОГО «а» В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

Р. А. БАГРАМЯН

(Р е з ю м е)

Гласный „а“ в диалектах подвергается трем видам изменений, а именно: историческому, взаимному и так называемому общему, которые исследуются в отдельности.

„а“ превращается в а (ա), ă (ă), â (â), ай (այ), о, օ (օ), ой (օյ), уօ (ուօ), уօ (օ=ուօ), у (ու), օ (օ), уа (ուա), ы (ը), ыа (ը=ը), ыэ (ը), э (է), и (ի) звуки.

В статье выявляются и характеризуются все условия и причины этих изменений, указывается их территориальная распространенность.

Далее показываются связи и этапы развития основных закономерностей звукоизменения „а“. По данным разных диалектов автор не только вырисовывал круги действия или охвата закона Ачаряна, но и этапы его развития.

В конце статьи обобщаются все основные и частные изменения „а“ по условиям, причинам и территориальной распространенности. Тем самым подготавливаются материалы для составления карт лингвистического атласа армянских диалектов.